

ՊԱՅՄԱՆՔ

Գիտակր Շարաթ օրեր պիտի հրատարակուի : Բաժանորդագրութեան տեղին է Ակորեան-Խան Թիւ 13.

# Պ Ի Տ Մ Ա Կ

## Լ Ր Ա Գ Ի Ր

Ա.ԶԳԱՅԻՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին երեք Մէք. 1. 50  
Հասին գին . . . Փր. 50  
Ծանուցման տղ. : 1. 50  
Անկար Գառնակ չնդունուի :

### Ա.ԶԳԱՅԻՆ

ԸՆԹԱՆՈՒԹՅՈՒՆՔ

Մեր երկրին ժողովուրդը՝ յորում կը գտնուի նաև մեր Ազգը, առ վերջին բաժանումն տարիներուն մէջ շատ նոր բան առաւ Երուսաղէմ, որոց մէջ գեղն ալ կայ, աղէկն ալ կայ : Սակայն ընկերութեամբ գործ տեսնելու շահաւէտ և օգտակար գրութիւնը՝ որով Երուսաղէմը և Ամերիկացիք իրենց հիմնադիր յառաջադիմութիւնները յառաջ վարեցին և կը վարեն, տակաւին մուտք և հաստատութիւն չգտաւ մեր մէջ : Թէ որ բանը մէ, անոնք՝ իրենց անբաւ հարստութեանց, հակադրաբար յառաջադիմութեանց և պանծալի բարբառութեան հոյակապ տանարները՝ որը շարունակ մեր աչքերը կը շրջեն, ընկերութեանց գաղտնիքով կատարեցին, ամենին սխալ խօսք մը քրտած չենք ըլլար : Ընկերութիւնը մեծ գործ կատարեցին անոնց մէջ և տակաւին կատարեցին ինչ որ, բայց մենք Տաճկաստանու ժողովուրդը տակաւին կեցեր և մինակ մինակ գործելու դատարարեալ գրութեան անկէքին տակ բազմ կը բնակուենք, անհատ անհատ կապիրներ. ձեռք ձեռքի տարով միարանօրէն և ընկերութեամբ մեծագործութիւններ կատարելու բազմադիմութեան գաղտնիքը դեռ չենք գիտեր :

Սակէ իբր երեսուն կամ երեսուն և հինգ տարի առաջ այս մասին մէկ նոր շարժում մը երեցաւ, մասնաւորապէս մեր ազգին մէջ, բայց տեսողութիւն չը գտաւ : Այն մասնակի երիտասարդութեան մտքին մէջ այլ և այլ նպատակաւ ընկերութիւններ հաստատելու խորհուրդ մը լրացաւ, բայց շուտ վիճեց : Հասնողը ընկերութիւն մը հաստատելու ձեռնարկութիւն կրնէր, որը առեարական, որը արհեստից և որը մարդասիրական, բայց կարծես մէ ասիկա նորաձեւութիւն մը էր, թիչ մասնակի մէջ բանն ալ անհետացաւ, խորհուրդն ալ : Ընկերութիւնը կազմուեցան, բայց մէկն ալ չսարքեցաւ, ծնունդին ու մահերին համար թէ մէկ առուր մէջ տեղի գտաւ :

Արդ ինչու այսպէս եղաւ, ինչ էր պատճառը. միմէ ընկերութեամբ գործ առաջ տանելու գրութիւնը ինքնին այսպէս անկաջող լինելուն համար էր որ այսպէս եղաւ, ոչ բաւ լիցի, բայց այդ ձախող փորձերը այնպէս կարծիք տրուին : Ամենուն բերանը այրեցաւ : Ով ինչ ընկերութեան մէջ մտաւ տուճեց, ոչ միայն շահ կամ արդիւնք չտեսաւ, այլ վերայ ևս տուաւ :

Այս ձախող փորձերուն հետևանքը ստեղծաւ որ ժողովուրդեան միտքը նախապաշարուեցաւ ընկերութեամբ գործ յառաջ տանելու գրութեան դէմ, և ուստի այդ շտան անցաւ, դարձեալ ամէն մարդ միայնակ կը գործէ : Բայց այդ անկաջող

փորձերուն պատճառը գրութեան մէջ չէր, այլ զանկաւ վարելու կերպին եւ կարգադրութեանց մէջ, և ասոր ասանկ ըստ շատ դիւրաւ կը հասկցուի աչքերնուս առջեր եղած Երուսաղէմ անհամար փորձերէն : Ինչու անոնք յաջողին և մենք չյաջողինք : Ինչու համար հոն ամէն տեսակ ընկերութիւնը հակադրաբար յառաջադիմութեանց մէջ պանծան, և հոս մէկ ընկերութիւն մը՝ մեր և իստապանայ : Անշուշտ պատճառ էր որ իրար այսպէս լինելուն, բայց ինչու է մի գրութեան մէջ չէ այդ պատճառը : Երբ յարգուեցան և վարչական եղանակին մէջ որոնելու ենք զայն :

Արդ այս դիտողութիւններէս կը հասկցուի որ, հոս մեր նպատակը ընկերութեամբ գործ յառաջ տանելու դրութիւնը շատագուրի է : Համոզուած ենք որ մեր ազգին նիւթական վիճակը որ շատ լեռնեալ և վատուած կացութեան մէջ է, արարուելու և յառաջանելու մէկ գլխաւոր միջոցը այս պիտի ըլլայ : Թէ որ կուզենք արհեստից, վաճառականութեան և այլ ամէն տեսակ գործոց մէջ ձեռք ունենալ և յառաջ երթալ, պարտինք միանալ և ընկերութիւններ կազմել, ընկերութիւններ որ հիմնեալ ըլլան յաջողութիւն և յարատեւութիւն երաշխաւորող ուղիղ սկզբբանց և օրէնքներով վերայ : Յայնժամ փորձով պիտի տեսնենք մէ ինչ զգալի փոփոխութիւն մը յառաջ պիտի գայ ազգին ընդհանրութեանը վրայ, և ինչ ազգու դարման մը պիտի ըլլայ ներկայ յետագիւմ վիճակուս : Այսպիսի շարժում մը ոչ միայն կացութիւնին նիւթապէս պիտի բարւոքէ, այլ և բարոյապէս ևս, բանգի նա երևելի միջոց մը պիտի ըլլայ արդի ցրուելու և օտարացեալ անհասականութիւնը միութեան և ընտանութեան բերելու, ազգայնութեան սէր և համակրութիւն մշակելու, ևն. ևն :

Թից մեր կարողութիւններն ու առանձնաշորտումները միանան, այն թող մեր սիրտերն ևս միանան, զօրութիւնն իս, տաղանդներին և դրամագրութիւն միացնենք և ձեռք ձեռքի տուած մեր հասարակաց փաստը պաշտպանենք, այն է՝ ազգիս նիւթական վիճակը բարւոքել գործի, աշխատութեան և շահու գուռներ բանալով, որ արդի ընթացքով անհնար է լինել : Հիմա ամէն հայ միայնակ մէկ թիւ անհատ մը է, ինքը իրեն մնացած է. «Պահպանաք ունիս նէ մըջէ կեր» է բանը, ոչ որ կարող է միւսին բան մը ընել. կրնանք ըսել մէ ատանկ պարտականութեան զգացումն ալ չկայ : Վիճակ մը որ ազգայնութեան սէրն ու զգացումը սպաննելէ ուրիշ պաշտոն չունի :

Թող չհասկցուի մէ ազգովին ընկերութիւն մը կազմելը ըսել կուզենք. յասարակութեան տեսակ տեսալ ընկերութիւններ կազմելու վրայ է, որ եմէ հինգ կամ տասը հատ մեր գիտցած և

հասցած սնովը հաստատուին Մայրաքաղաքիս մէջ, այժմու նիւթական ծառայութեանց % 50 կը վերնայ մեր ընդհանրութեանը վրայէն :

Արհեստից, վաճառականութեան և այլ տեսակ տեսակ գործերու համար ընկերութիւններ հաստատելուն կարևորութեանը և օգուտներուն վրայ այսչափ մը խօսեցանք այս անգամ և կը յուսանք մէ ըրած դիտողութիւններին շատերուն մասնաւոր մտածութեան նիւթ պիտի ըլլան, ուրիշ անգամ պիտի խօսինք յաջող և յարատեւ ընկերութիւններ կազմելու եղանակին, կարգադրութեանցը և օրէնքներուն վրայ :

### ԳԱՂՏՆԻՔ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ

Կուզեն յաջողութիւն գտնել բու կոչմանը կամ գործելու մէջ, հաւատարմութիւնը նորին անկեան վերջ ըրէ և անհաւատ պիտի յաջողիս : Ըսել կուզենք ապա ինչ որ է գտնուած վիճակը, վաճառական մը, արուեստագործ մը կամ բարձրագույն մը, այդ կուզանք պարտականութիւնները մերեկան ծառայութեամբ հաւատարմաբար կատարել. նոյնպէս ամէն մէկ գործող մէջ ճշտութիւնն ու հաւատարմութիւնը Մարաց և Պարսից օրէնքներուն պէս թեզի անխախտ կանոն ըրէ, յայնժամ յաջողութիւնը արևին լոյսին պէս ստոյգ է : Գիտենք որ շատերը պիտի հեզնեն մեր այս խօսքը, որովհետեւ իրենց կարծիքը այս բաժնուս միշտ հակառակն է : Անոնք կը սեպեն մէ հաւատարմութիւնը յաջողութեան արգելք է, և անհաւատարմութիւնը կատարեալ յաջողակութիւն է : Բայց մենք գիտենք որ փորձը մեր բաժը պիտի հաւատաւէ : Մենք հոս չենք խօսիլ հաւատարմութեան վրայ իբր առաքինութիւն, այլ իբր հանգամանք յաջողութիւն ձեռք բերելու : Երուսաղէմ և Ամերիկայի մէջ հազարներով մարդիկ կան որ կատարեալ հաւատարմութիւն կը պահեն իրենց գործոցը կամ պաշտօնին մէջ, երբոր ուրիշ կերպով ամբարիշտ կամ աշխարհիկ անձինք են : Մեզի կերակայ մէ անոնք շատ աղէկ հասկցած են այս առաքինութեան գործնական արժէքը, և գրեթէ ընդհանուր ունակութիւն մը եղած է ամէն կարգի անձանց վրայ, որչափ որ անտարբեր ալ ըլլան կրօնի և աստուածապաշտութեան վրայ :

Գործին մէջ հաւատարմութիւնը՝ առատ դրամագրութեան և բարձր հանձնարներէ աւելի արժէք ունի, քանզի նա հիւս է յաջողութեան :

«Ես, կըսէ անբաւ հարստութեան տէր երևելի վաճառական մը, այս մեծ յաջողութիւնը գտայ, խիստ աղքատիկ վիճակէ մը մինչև հոս բարձրացայ, գործքի մէջ մտած վայրկեանէս մինչև ցայս վայր իմ վրաս գրուած պարտականութիւնները առանց բացառութեան ամէն-

քըն ալ ճշդիւ և անձանձիր կատարելով. և անա այս է իմ յաջողութեանս գլխաւոր գաղտնիքը » :

Երկրորդ՝ աւելցուր ասոր վրայ անձանձիր յարատեւութիւն, և ալ մի տարակուսիր յաջողութեանդ վրայ :

Երբոր կը տեսնես հարուստ և յառաջացեալ ժողովուրդները, մի կարծեր որ անոնք անոր մէջ ծնան, կամ մէ վայրկեանաբար և անմիջապէս ձեռք բերին : Յիշէ որ անոնք բազմամեայ համբերութեան և յարատեւ ջանից արգասիք են : Արդեօք որքան ծանր դժուարութիւններ և ձախող ու յուսահատից պարագաներ դիմադրեցին մինչև որ այն աստիճանին հասան : Անորո՞՞ք երիտասարդութիւնը ձեռնարկութեան հետ յաջողութիւն կերպէ, բայց ատիկա անհնարութիւն է : Չենք ըսեր բնաւ եղած բան չէ, սակայն եղածը կայ նէ, յաւէտ բացառութիւն է : Նաև յանկարծական յաջողութիւնը յանկարծական անկում կը գոչակէ : Աստիճանաւ ձեռք բերուած յաջողութիւնն է որ մնայուն և տեսողական վայելք կերպարանէ :

Արդ մէ որ կը բաղձաս յաջող և երջանիկ ապագայ մը ունենալ, ձեռք գարկած գործիդ մէջ երբոր դժուարութիւններ և ձախող պարագաներ դէմ կը կենն, շուտ մը մի վիատիր, նայէ որ բացութեամբ դիմադրին ամէնքը և յարատեւելով յաջողութեան և փստան կեղիք որ յաջողութեամբ պիտի պատկուի համբերութիւնը :

Երբորդ՝ մէ որ յաջողութեան կը բաղձաս, աշխատանքէ ամենին մի փախչիր, անխոնջ աշխատանքն է որ յաջողութիւն և առատութիւն կը խոստանայ : Ան որ ձեռքերը ծոցը դրած կը նստի, իր հացը մտարլու կը դատապարտուի : Մոյլ և անաշխատասէր մարդուն յաջողութիւնը ծառայութիւն է : Երուսաղէմը փստաւոր յաջողութեանց մէջ կը պանծան, հարուստ և երջանիկ ժողովուրդ են : Այն՝ ճշմարիտ է, բայց անգամ մը գնա և անձամբ տես անոնց աշխատանքները և պիտի հիանաս, ու քսես. «Իրաւ՝ անա հոս է այս ժողովուրդոց մեծամեծ յաջողութեանց գաղտնիքը» : Իրաւ հոն գործելու եղանակները շատ դիւրացած են, շոգիին զօրութիւնը մարդոց բնաւ մեծեցուցած է, բայց և այնպէս՝ բոլոր ժողովուրդը տակաւին անուր կաշխատուի : Այն մեծ մեծ հակերով անընդհատ հոս մեր երկիրը բերուած Երուսաղէմ տեսակ տեսակ ապրանքները՝ որ մենք ինչ աղուր է, ինչ մարուր է կրեսնք կըզմայլինք, այն միւր և երջանիկ ժողովուրդոց աշխատանքը արգասիքն են : Չկարծեմք մէ այդ բաները գետնէն կը բուսնին կամ ինքնին կը գոյանան, ամենապաշտ աշխատանքներով երևան կուզեն, հոգիներին մարմիններէն բակուելով : Բայց «աշխատող մարդուն բուրնը անուր է», կըսէ զիրքը : Գործող մար-

զը նաց կուտէ. ան որ չգործեր, նաց ալ մոյ չուտէ :

Մեր փախաբը այս է որ, ընծերցոյր վերը նշանակուած կէտերը փորձի տակ զինն և տարակոյս չունին որ բոլոր ըստմաներն անձամբ պիտի ստուգեն :

Ինչպէս որ սէրը գէշութիւն չ'տարժիր անանկ ալ նախանձր աղէկ բան չ'տօսիր : Ինչպէս որ առաքելութիւնը իւր վարձքը ունի՝ նոյնպէս մարութիւնն ալ իւր պատիճը ունի :

ԸՆՏԱՆԵՎԱՆ

Կուզե՞ս տունդ բարեկարգ և վայելազարդ վիճակի մէջ պահել, հոգածու հսկողութեամբ նկատու հետեւեալ ընտիր կանոնները, —

1. Տան մէջ ամէն բանի որոշ տեղ մը յատկացուր : Մի թողուր որ բաները բազմիկ ձեռք խաղալիք ըլլան, իւրաքանչիւր ոչ ձեռքը անցած բաներ իւր իրեն փշած տեղը դնէ :

2. Ամէն բան իր յատկացեալ որոշ տեղը դիր :

3. Ամէն բան ձիւղ իր ժամանակին բրէ :

ԲԱԶՄԱԿՆՈՒԹԻՒՆ

Ոմանք կը կարծեն թէ բազմակրճուրիւնն արգիլելը քրիստոնէական կրօնին մէկ լուծն է, եւ ծանր լուծ մը: Այս կարծիքը ամուսնական վիճակին նիւթ վախճանը ինչ ըլլալը զգիտալէն յառաջ կուգայ: Թէ որ մտքը գիտնայ եւ տեսնուի թէ ամուսնութեան գաղտնիքը եւ բնութիւնը նիւթ ինչ բանի մէջ կը կայանայ, նորա իմաստասիրական հանգամանակներուն քաղաքակրթական ասանկ բան մը մտնէ անգամ պիտի չանցնի: Նա պիտի գիտնայ որ արիկա քրիստոնէութեան հեղինակած մէկ լուծը չէ, այլ բանին բնութեանը մէջ է արգիլումը, անանկ որ քրիստոնէական կրօնին բնուածքը որիւր բան չէ բայց սգիտութիւն մը փարսեղ, սխալմունք մը ուղղել: Երբ փարսեղի գրեթէ ամբողջ փարսեղ համար կը հարցնէին, «Եթէ արժան իցէ ումէ արձակել զկին իւր, ըստ ամենայն վնասու»: Նա այսպէս պատասխանեց, «Զիցէ՞ ընթերցեալ ձեռք՝ թէ որ հաստատեցն ի սկզբանէ՝ արու եւ էգ արար գնուա՛ւ եւ ասէ. վասն այսորիկ թողցէ այր՝ գնայր եւ գնայր՝ եւ երիցէ զինն կնոջ իւրոյ եւ եղիցին երկուքն ի մարմին մի: Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին: Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեցցէ:» Քրիստոսն այս կարն էր իմաստասիր պատասխանը ուսուցողութեան արժանի է: Նա ոչ միայն ամուսնական վիճակին խորհուրդաւոր գաղտնիքը պարզեց եւ բացատրեց ու նորա ամբողջ փիլիսոփայութիւնը ի յոյս բերաւ, այլ եւ հոգա այս մասին ունեցած անկեղծ զգիտութիւնն ալ՝ հարցուրթեամբ յանդիմանեց, որք թէ կրօնի նախնական ուսուցիչ կարգեալ էին, բայց այս Աստուծային սանձանագործութեան հեմարիտ բնութեանը վրայ գաղափար անգամ չունէին, բոլորովին սգէ էին: Անոնք զգացին այս իրաւացի յանդիմանութեան ծանուրբիւնը եւ ամբողջովն արդարացրին իրենց սգիտութիւնը, որպէս թէ Մովսէսը սարքի բան մը սովորեցուցած ըլլայ իրենց: «Իսկ Մովսէս ընդէ՛ր պատուիրեաց մեզ սալ թուղթ մեկ-

նելոյ՝ եւ արձակել,» հարցուցին, որոյ համար աւելի սաստիկ յանդիմանութիւն մը ընկալան Տէրոջմէն. «Մովսէս՝ վասն խստասուրբեան ձեռոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր, այլ ի սկզբանէ՛ ոչ եղեալնպէս:»

Ամուսնական վիճակին նկատմամբ փրկչին տուած այս բացատրութիւնն ինչպէս որ հին կտակարանին աւանդած արարչագործական պատմութեանն էս, կը սովորին որ, ամուսնութիւնը ամենիմաստ Արարչին խորհուրդով սանձանակուած որոշ վիճակ մի է, որոյ կարգից օրէնքը մէկ արու եւ մէկ էգ լինելն է: Ասկէ սարքի եղած փոքր մը, ինչպէս մէկէ աւելի կին ունենալը, կրնայ եւս վիճակ մը համարուիլ, բայց ոչ ամուսնութիւն: Ամուսնութիւնը սիրապէս կրնայ երկու սարսաւեռ անձանց մէջ գոյանալ: Այս համեմատական հաստատութիւնն մագի չափ շեղելով անհնար է ամուսնական վիճակը գոյացնել. նորա որոշ կէտը այս է:

Խորհուրդաւոր միութիւն յերկուս անձանց գաղտնիքն ալ այս ձեռնարկութեան զօրաւոր ապացոյց մի է: Երբ քեզ կամ աւելի անձինք կը խառնակին, ալ եւս՝ եղիցին երկուքն ի մարմին մի գաղտնիքը կը վերցնայ կը ջնջուի, ամենայնիւ սարքի եւ եղծեալ վիճակ մը կը ըլլայ, հարազատութեան շարժան կը կորսի, եւ բանը լոկ նմանութիւն (թափիք) կը մնայ:

Եղած փորձերն ալ այս յատկութեանը տեսնուած տեսութիւնները կը հաւաստեն: Ամէն ուր որ բազմակրճութեան վարդապետութիւնը ընդունուեցաւ, նոն ամուսնական երջանիկ կեանք ջնջուեցաւ, նորա միսկարակաւ հանդիմանք անհետացան, եւ ընտանեկան կացութիւնը խառնակ շարժութեանց տեսարան եղաւ:

Մեր օրովը Մորմոնականութիւնն է զիստուորապէս այս վարդապետութեան ջերմ պատկան կեցող դրութիւնը, բայց նորա պզգալի եղծմունքները, նոյն իսկ Մորմոն անուանը անգամ խորհելի ըրած են աւարտի առջին:

ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵՆԵ ԵՎ ԶԱՐԵՆԵ ՄՈՒՆՏՆԵՐ

Մարդս այնպիսի զարմանալի էակ մ'է որ, ըստ ինքեան բարի և օգտակար եղած շատ բաներ գէշ և վնասակարութեան կրնայ փոխել: Մինչև անգամ աղօթք՝ որդրմութիւն՝ ծանուցանութիւն, իւրեանց էական նպատակներէն շեղեալ գործածութեամբ կրնան ի ցոյցս մարդկան և այլ ուրիշ անարդ շարժառիթներով կատարուած մեղքի և մարութեան փոխուիլ:

Ուսմանը վերաբեր շատ գովելի է. և ուսման սէրը բնականութեան անմահ կարողութիւնները աղնուացընող և բարձրացնող տարրեր մը կրնայ համարուիլ զայն ունեցողին մէջ, սակայն և այնպէս տեսնուած է որ սա ալ շարաշար և սխալ գործածութեամբ շատ անգամ մեղաց և մարութեան փոխուած է: Բայց ինչպէս որ աղօթից և որդրմութեան սնանց վրայ շարաշար գործածութիւնը տեսնուելուն համար օրն պարտաւորութեանց գէմ խօսիլն ու ստոնց սէրը մարտու և

խափանելու ձեռնարկելը ամբարշտութիւն է՝ նոյնպէս ալ ուսման սնանց վրայ շարաշար գործածութիւնը տեսնուելուն համար անոր գէմ խօսիլն և անոր սէրը մարտու. ու խափանելու ձեռնարկութիւնը անիրաւութիւն և աններելի յանցանք է: Ոսկին անոր հետ խառնուած աղտոտութիւններէն մաքրելը մարդկային ճարտարութեան գործն է. իսկ աղտոտութեանց պատճառաւ ոսկին առ ոչինչ համարելը յիմարութիւն է:

Արդ՝ կեանքը վախճան մը ունենալուն պէս, եթէ ամենայն ինչ վախճան ունենային՝ այն ատեն մարդիկ չափով մը ազատ պիտի ըլլային առ առաքելութեան և մարութեան, ու ուղղութեան և սխալմունք մէջ տեղը ուղղած ընտրութիւններ ընելոյ: Եւ թէպէտ ամբարշտութիւնը և անիրաւութիւնը ամուսնածապաշտութեան և արդարութեան նախամեծար համարուելով գէշ և սխալ ընտրութիւն մը ընէին՝ այսու ամենայնիւ անոնց ըրած այս մեծ սխալմունքը արդեւնքը կեանքերնուն հետ վերջանալուն համար անոնց յիմարութիւնն ալ կերպով մը կրնար ներելի ըլլալ: Բայց հիմա բանը այսպէս չէ. այս մահկանացու կեանքին վախճանը այնպիսի կեանքի մը սկզբնաւորութիւնը պիտի ըլլայ, որ ալ վերջ պիտի չունենայ. ամենայն ոք հանդերձեալ աշխարհին մէջ յաւիտեական կեանք մը պիտի ունենայ, անոր թէ հաւատայ և թէ չհաւատայ, թէ վախճարի և թէ չվախճարի:

Այն հանդերձեալ կեանց աւուղութեանը վրայ ով կարող է լիովին ըմբռնուած մը ունենալ: Անշուշտ շատերը կարող են ըսել թէ այնպիսի տեսողութիւն մ'է, որ յաւիտեան է. բարի՛ սակայն յարիտեան բառին ինչ նշանակելը արդեւնք կրնամք հասկնալ: Ո՛չ ոչ մինչև անգամ ամենամեծ կարողութիւններ ունեցողները կարող չեն զայն լիովին հասկնալոյ, բայց ի անհուն կարողութեանց տէր եղողն որ անսկիզբն և անվախճան յաւիտեականութեան մէջ կ'ընտելի: Իսկ մեր եթէ բազմատեսու ըլլամք զայն հազարաւոր և միլիոնաւոր տարիներու հետ՝ պիտի գտնեմք որ մեր երկակայնիւ կարող եղած ամենէն երկար տեսողութիւնը այնքան կարճ է անոր քով, որ բացարձակապէս անոր ամենափոքր մասը չկրնար անուանիլ: Աւագի հատի մը համար երկրապոնտին մէկ մասն է կրնամք ըսել. ջրոյ մէկ կաթիլին համար Ովկիանոսին մէկ մասը ըլլալ կրնամք երևակայել: Ասակայն տարիներու և դարերու ամենամեծ թիւը որ մարդկային հոշուագիտութեան սահմանէն դուրս է՝ տակաւին յաւիտեականութեան մաս մը չկրնար սեպուել:

Այս գիտողութիւնը ըստ ինքեան զարմանալի է. բայց որչափ հաճոյսական պիտի ըլլայ երբոր միտքաւորութիւնը թէ յաւիտեականութիւնը մեր հանդերձեալ կեանքին տեսողութեանը չափը պիտի ըլլայ: Ուրեմն Աստուածածապաշտութեան և ամբարշտութեան, արդարութեան և անիրաւութեան, առաքելութեան և մարութեան մէջ տեղը խիստ զգուշաւոր և խոհական ընտրութիւն մը ընելոյ ստիպեալ եմք, քանզի ստոր արդիւնքը յաւիտեական բառին մը պիտի ըլլայ մեզի:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՄԹՆՈՒՄՍՅՈՒՆ ԵՎ ԲՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Շարունակարարն և Վերջ Տես թիւ 55

Վերջին թիւերնուս մէջ նշանակուած իրողութեանց միջոցաւ եւ այլ բազում փորձերով լաւ ստուգուած է թէ՛ Ելեքարականութիւնը եւ կայծակը միեւնոյն բանն են, երբոր այս ելեքարական հեղուկը արագ շարժումներ կունենայ միմտորտին մէջ, մենք ըստ կ'տեսնեմք եւ աճել ձայներ կ'լսեմք, տեսնուած ըստ որ փայլակ կ'հոշուի, ելեքարական հեղուկին շարժումն է, եւ ձայնը՝ որ որոտմունք կը կոչուի, այն արագ շարժմամբ միմտորտին ճեղքուելէն յառաջ կուգայ, որքան հոսքանի մը տեղեկութիւններ տանք Մթնոտրայ ին ելեքարականութեան եւ որոտմունքներուն վրայ:

Միմտորտին մէջ դտնուած ելեքարականութիւնը շատ փոփոխմանց ենթակաց է: Այլ եւ այլ տեղեանց դիրքը, տարայն եղանակները, ամպոց միճակը եւ շատ ուրիշ պարագաներ ազդեցութիւն ունին անոր վերայ: Անշուշտաւ եւ բարձր տեղեանց վրայ խիստ զօրաւոր կ'ըլլայ: Այս պատճառաւ է որ միշտ վտանգ կայ կայծակէն զարնուելու բոլոր, երանց եւ բարձր շինուածոց վրայ, եւ նաեւ բաց տեղուանք. ընդհանրապէս այս տեսակ դէպքերը վերոյիշեալ տեղերը կ'պատահին: Տեղւոյ մը բաժնորակ բարձրութիւնը չէ որ վտանգ յառաջ կ'ընէ այլ դիրքը, օրինակի համար, եթէ բոլոր մը դուրս ցեղալ ծայրեր ունենայ, առաւել զօրաւոր ելեքարականութիւն կերելի հոն, քան թէ բոլոր մը տափարակ դազաթան վերայ: Երբոր միմտորտը միջապատ է, ելեքարականութիւնը զօրաւոր է օդին մէջ: Օդին հանդարտ եղած ատենը ելեքարականութիւնը ամբարուած մէջ առաւել տըկար է քան թէ ձմերուան մէջ: Ամառը, երբոր քանի մը օդ տեղը շար մնացած է արեւածագէն սիւնելով մինչև ժամը ութ կամ ինն հետգէտէն զօրանալու վրայ է օդին մէջը ելեքարականութիւնը, վերջը կը սկսի տկարանալ, եւ իրիկունք ամենատըկար վիճակի մէջ է:

Միմտորտին ելեքարականութիւնը բազմաթիւ փոփոխութեանց ենթակաց է: Ամէն ժամանակ եւ ամէն տեղ մի եւ նոյն սաստիկութիւնը չունի: Ընդհանրապէս շատ բարձր տեղերու վրայ միմտորտը զգուշաւոր և բարձր շինուածոց վրայ շատ զօրաւոր կ'ըլլի: Որոտման ատեն մասնաւոր զգուշութիւն ունենալու է որ ստանձին եւ բարձր տեղեր չկենանք. թէպէտեւ փողոցներուն եւ տանց մէջ զրէթ թէ չտեսնուիլ նոս, ոյլ շատ անգամ բաւական զօրաւոր կերպիւ կերելի ծովեղերեայ թուփերու եւ կամուրջներու վերայ: Տեղի մը լոկ բարձրութիւնը չէ որ վտանգաւոր կընէ զայն, այլ տեղին անկեղծաւոր կամ սրածայր ըլլալը, երբոր օդը միջապատ է ելեքարականութիւնը խիստ զօրաւոր կը լինի: Զօրաւոր հովերը կը նուազեցունեն անոր սաստիկութիւնը: Ընդհանրապէս ամառը երբոր օդը շուրջ ըլլայ, ելեքարականութիւնը կամ շարժման արեւածագէն մինչև կէսօրէն երեք կամ չորս ժամ վերջը, յետոյ կը նուազի մինչև որ առաւօտեան ցօղը իջնալ սկսի, եւ ընդհանրապէս կէս օրէն քիչ մը յառաջ ամենազօրաւոր վիճակին կը հասնի:

Ասկից կերելի թէ միմտորտային ելեքարականութիւնն ալ ծովուն նման մակրութեանցութիւն ունի, որոյ պատճառաւ Զի ժամու մէջ երկու անգամ կը նուազի եւ կուճի: Այս իրողութիւնները ստուգուած են ելեքարական կոշուած գործիքով մը, որով միմտորտին մէջ գտնուած ելեքարականութեան շափերը ճշդիւ կրնան գտնուիլ: Ելեքարականութիւնը մեծ կարեւորութիւն ունի բուսականաց ամման մէջ, եւ նոյն իսկ այս պատճառաւ է որ անձրեւի կը կարօտին աւելի քան որչափ ուրիշ որ եւ իցէ տեսակ ջրոյ մը: Յատուկ անօրինութիւն եղած է բնութեան մէջ՝ որ լուսականաց հարկ եղած ելեքարականութիւնը անձրեւներուն միջոցաւ անոնց հասնի: Գարնան մէջ երբոր ճիշտ տունկերը աճիլ կսկսին, ժամանակաւոր ելեքարական ամ-